

**5.6. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2003թ. I կիսամյակում ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի վիճակի մոնիթորինգ:** 2003թ. I կիսամյակում մթնոլորտի աղտոտվածության վիճակի մոնիթորինգ է իրականացվել Երևան, Արարատ, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի և Հրազդան քաղաքներում:

- Երևան քաղաքում տեղակայված 3 դիտակայանի միջոցով մթնոլորտային օդի 2968 փորձանմուշներում որոշվել են 5 աղտոտիչ նյութերի (փոշի, ծծմբի երկօքսիդ, ազոտի երկօքսիդ, ազոտի օքսիդ և քլոր) պարունակությունները: Փետրվար և մարտ ամիսներին փորձազննումներ չեն կատարվել: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական թույլատրելի նորմաների (ՍԹԿ) ամենաբարձր գերազանցում արձանագրվել է հունիս ամսին՝ համապատասխանաբար 5.3 և 2.2 անգամ, ծծմբի երկօքսիդին ասպրիլին՝ 3.4 անգամ: Ազոտի երկօքսիդի առավելագույն ՍԹԿ ամենաբարձր գերազանցում արձանագրվել է հունվարին՝ 2.6 անգամ:
- Արարատ քաղաքում մշտապես գործող 1 դիտակայանի միջոցով վերցված փորձանմուշների փորձազննումների արդյունքներով ցեմենտի փոշու միջին ամսական ՍԹԿ ամենաբարձր գերազանցում արձանագրվել է մայիսին՝ 3.0 անգամ:
- Ալավերդի քաղաքում տեղակայված 2 մշտական դիտակայանների միջոցով մթնոլորտային օդի 1710 փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ածխածնի եօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները: Տեխնիկական պատճառներով փոշու պարունակության որոշման փորձազննումներ չեն կատարվել: Առաջին եռամսյակում դիտարկումները կատարվել են միայն հունվար ամսին: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ ամենաբարձր գերազանցում արձանագրվել է մայիսին՝ 4.0 անգամ: Որոշվող մյուս նյութերի կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- Վանաձոր քաղաքում տեղակայված 3 դիտակայանների միջոցով վերցվել է մթնոլորտային օդի 2788 փորձանմուշ, որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները, որոնք դիտվել են թույլատրած նորմաների սահմաններում:
- Գյումրի քաղաքում տեղակայված 1 դիտակայանի միջոցով վերցված փորձանմուշների փորձազննումների արդյունքներով փոշու միջին տարեկան և առավելագույն ՍԹԿ-ների ամենաբարձր գերազանցում արձանագրվել է հունվար, փետրվար, ասպրիլ և մայիս ամիսներին՝ 3.3-ական անգամ:
- Հրազդան քաղաքում տեղակայված 1 դիտակայանի միջոցով ցեմենտի փոշու կոնցենտրացիայի որոշման նպատակով վերցված փորձանմուշների փորձազննումների արդյունքներով փոշու միջին ամսական ՍԹԿ ամենաբարձր գերազանցում արձանագրվել է մարտ ամսին՝ 8.0 անգամ:

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** 2003թ. հունվար ամսին Վանաձոր քաղաքի մակերևութային ջրերի աղտոտվածության ուսումնասիրման լաբորատորիայի կողմից Դեբեդ գետից վերցվել է 3 փորձանմուշ, որոնցում կատարվել է 20 ցուցանիշի որոշման 60 փորձազննում: Որոշվող բոլոր ցուցանիշների կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

2003թ. փետրվար-հունիս ամիսներին մակերևութային ջրերի աղտոտվածության ուսումնասիրման լաբորատորիայի վերանորոգման պատճառով մակերևութային ջրերի նմուշահավաք և փորձազննումներ չի կատարվել: